

նոնք ոչ միայն արուեստի շարադրութեան մեծ նմանութիւն ունին իրարու հետ, այլ նաեւ ժամանակակից են եւ նոյն եկեղեցւոյն համար շինուած: Քանի որ վերոյիշեալ միւս դուռերուն վրայ շինողի անուն կը պակսի, կարելի է խորհիլ որ անոնք ալ Շնոֆորչահի ձեռքին արդիւնքներն են: Ասիկա ըսելու համար դիտութենէ աւելի քաջութիւն պէտք է ունենալ:

Վերջապէս չորրորդ դրան մը մասին կը խօսի դարձեալ Հայր Բժշկեանց, երբ կը պատմէ Խրիմի Հայոց 1777ի դաղթականութեան մասին, երբ 3000 տուն Հայեր կը փոխադրուէին Նոր Նախիջեան: Ասոնց մէջ էին նաեւ 80 տուն Հոռոմէադաւան Հայեր, որոնք կու գան Կատարինապու եւ հոն կը հաստատուին, կառուցանելով նաեւ Ս. Լուսաւորիչ անուն եկեղեցի մը, որուն ձախակողմեան աւանդատան մէջ կը զետեղեն իրենց հետ բերուած դուռը՝ «Երկփեղկեայ ընկուղենի հին քանդակեալ խաչազարդ եւ ծաղկազարդ վերուստ ի վայր, եւ ի վերայ երկուց փեղկիցն դոյ յիշատակարան 314 ամաց. կէս մի փորագրեալ, եւ կէս մի գրծագրեալ, որ էր դուռն տաճարին Քէֆէի, ըստ որում ցուցանէ ոտանաւորն:

ԱՍՏՈՒԱԾԱԲՆԱԿ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐԻՍ,
ԴՈՒՌՆ ՄՏԻՑ ԿԵՆԱՅ ՅԱՐԿԻՍ,
ԿԱՆԳՆԵԱԼ ՅԱՆՈՒՆ ՍՈՒՐԲ ԱՍ-
ՏՈՒԱԾԱԾՆԻՍ,
Է ՅԻՇ(ատակ) ՀԱՄԱԻՐԷՆ ԺՈՂՈ-
ՎՐԴԵԱՆՍ. ԹՎ(ին) ԶԿԱ(1512)»
(էջ 250):

Կաֆայի Ս. Աստուածածին եկեղեցին հնադարեան եկեղեցի մըն էր, որուն արձանագրութիւնը ցոյց կու տայ որ շինուած էր

«Յերեքհարիւր եւ հազարին,

Յութ եւ յերեսուն սկսեալ ամին»(6)

այսինքն Քրիստոսի 1338ին: Հաւանական կը գտնեմ որ այս դուռն ալ 14-րդ դարէն մնացած է եւ գուցէ 1512ին նորոգուած եւ այդ նորոգութեան առթիւ փորագրեալ յիշատակարանին լոկ գծագրեալ մաս մըն ալ կրց-

ւած է («Կէս մի փորագրեալ, եւ կէս մի գծագրեալ»): Փորագրեալ մասը ըլլալու է հնադոյն մասը եւ գծագրեալ մասը յիշատակարանին վերջին մասը՝ 1512 թուականն ալ պարունակող:

Այժմ խօսինք Երուսաղէմի, ինչպէս նաեւ Կաֆայի դուռերուն արուեստին մասին: Նախ և առաջ ակնբախէ Երուսաղէմի դրան եւ Կաֆայի դուռերուն արուեստի շարադրութեան բացարձակ նմանութիւնը. բան մը, որ մեզի խորհիլ կու տայ որ նոյնիսկ եթէ անոնք միեւնոյն վարպետի գործն են, անտարակոյս կը հանդիսանան նոյն դպրոցի, արուեստի նոյն հասկացողութեան գործեր: Կարծես մեր ըսածը կ'ուզէ հաստատել նաեւ Երուսաղէմի դրան յիշատակարանը եւ Կաֆայի մեր հոս ներկայացուցած առաջին դրան յիշատակութիւնը: Երկուքին մէջ ալ մեկեկնասը ԹՈՐՈՍ է եւ ես կը յանդգնիմ խորհիլ որ այս երկու Թորոսները նոյն անձնն են: Հետաքրքրական է Երուսաղէմի դրան յիշատակարանին մէջ Թորոս Պէյ տիտղոսը, որ աւելի Ղրիմի Հայոց մէջ գործածուած տիտղոս մըն էր: Ըստ իս, Երուսաղէմի դուռը Կաֆա շինուած էր եւ Կաֆայեցի փայտափորագրիչ վարպետներու գործ էր, զոր մեկեկնաս ԹՈՐՈՍ Պէյը Երուսաղէմ ուխտի եկած առեւ հետը բերած էր: Անտարակոյս այդ է պատճառը, որ դուռը յարմարցնելու համար իր տեղին, հարկ տեսնուած է քիչ ինչ տաշել, կտրել:

Երուսաղէմի եւ Կաֆայի երեք դուռերուն գծագրական շարադրութիւնը նոյնն է: Պորտին ալ վրայ՝ որոնց նկարները ունին՝ երկփեղկ դուռերուն վերի մասերը կը գրանեն բարձրաքանդակ փորագրեալ յիշատակարանները, ասոնցմէ միայն 1371 թուականաւ Շնոֆորչահի ստորագրութեամբ դուռն է որ յիշատակարանին վրայ ունի գալարուն տերեւազարդեր, շատ սովորական հայկական մանրանկարչութեան և քառափորագրական արուեստին: Շնոֆորչահի շինած դրան վրայ՝ երեք, Երուսաղէմի դրան վրայ՝ չորս, իսկ Թորոսի եւ Մամիկոնեանենց դուռերուն վրայ՝ հինգ հաւասարաթեւ խաչեր շարուած են իրարու տակ, իւրաքանչիւր փեղկի մէջ: Խաչերուն թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին յատակները

(6) «Ղրիմի Հայկական Գաղութի Պատմութիւն»:

Վ. Միքայէլեան, 1964, Երևան, էջ 321: